մանակ*, բայց դորանով իրողութիւնը չէ փոխւում։ Նորա ազդեցութեան մի նշան էլ այն կարելի է համարել, որ ընտրութիւնից յետոյ նա իւր աշակերտներով հաստատւում է Էջմիածնում։

Թովման հասել էր իւր մեծ նպատակին. ուստի և հասկանալի է նորա ջանքերը Էջմիածնի նորոգութեան գործում։ «Բազում աշխատութիւնս կրեաց ինքն վարդապետն և իւր աշակերտքն, գրում է Կիրակոս Բանասէրը, ի սրբել տաճարացն Էջմիածնին և Հռիփսիմին և Գայիանին և ի շինութիւն պարսպացն, խցերուն և տանցն. զի ինքն անձամբ աշխատէր և զամենայն յաւժարեցուցանէր ի շինութիւնն»**։ Շինարարական այս գործունէութեան մասին ակնարկութիւն ունի և Թովման ինքը իւր Ցիշատակարանի մէջ։ Հէնց կաթուղիկոսի ձեռնադրութեան օրը «առեալ ի ձեռն զառաջին տան հիմնարկութիւնն ես արկի եղբարքք իմով», որով կատարւում է տարիներ առաջ նորա տեսած երազը***։ Այս դէպքը ցոյց է տալիս մի ևնոյն ժամանակ. թէ Թովմայի սրտին ինչպէս մօտ էր Էջմիածնի վերանորոգութեան գաղափարը և ինչպիսի՞ ջերմ մասնակցութիւն է ունեցել այդ մտքի իրագործման մէջ։

Բայց նիւթական այս շինութիւնից աւելի գնահատելի է Թովմայի մի ուրիշ գործը Էջմիածնում. նորընտիր կաթուղիկոսը Կիրակոս Բանասէրի ասելով «Գ աւր անսուաղ անցոյց զսուրբ և զնրաշափառ ծնընդեանն Քրիստոսի և պատարագ մատոյց Գ աւր հետ իրերաց և արձակեաց զԱղթամար ի զուր և յանպատշաճ անիծիցն. զոր վասն փառամոլութեանն արարին Կիլիկեցիքն†»։ Երկար դարերի հակառակութիւններից և փոխադարձ բանադրանքներից յետոյ՝ հայրապետական իշխանութեան միութեան, գերադրական Աթոռի հեղինակութեան գաղափարի նուիրագործումն էր այս Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ. նորընտիր կաթուղիկոսը գիտակից էր բոլէի սրբութեան, որ այնպիսի երկիւղած և բարեպաշտ նախապատրաստութեամբ իրագործեց, բայց նորա յետևը կանգնած էր Թովման, այս գաղափարի իսկական ներկայացուցիչը։ Թէև վերջինս միայն անցողակի կերպով է յիշում այս դէպքը իւր Ցիշատակարանում—«զրանադրութիւն և զկապանք կղզւոյն Աղթամարայ յօրհնութիւն փոխեաց» (Կիրակոս կաթողիկոսն)†† և առանց իւր մասնակցութիւնն այդ մեծ գործում մատ-

---

* Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Ցիշատ 80.

** Նոր Նիւթեր. Ար. 747/8.

*** Կոստանեանց. 65.

† Նոր Նիւթեր. Ար. 745. (11)։

†† Կոստանեանց. 84/5.